

ի չբիթալ նորա, որ յոյժ մեծ էր. եւ էր որ- 95
 պէս առազաստ թաղաւորի զարդարած. եւ
 զառաստաղն եւ զպատերն ոսկով եւ արծա-
 թով լցած, այլ եւ ազնիւ լաճվարդով եւ
 դունզդուն զեղերօք յօրինած. եւ զայլն խու-
 մաչով բռնած: Զի յոյժ պատվեն նոքա զաղ- 100
 քատս եւ զտնանկս, զորքս եւ զայրիս եւ
 զհիւանդս: Եւ ամէն եկեղեցիքն ունին չբի-
 դալ ըստ կարօղութեան, այլ սա Փափին էր.
 եւ չկար նման սմա: Եւ էր երկայնաձիգ փո-
 ղոցի նման. եւ չորս չորս տակ անկողնի տեղ 105
 լայնութիւնն: Եւ հարցաք թէ քանի՞ հիւանդ-
 կայ աստ. ասին մեզ թէ այժմ երկու երեք
 հազար կայ. ապա յամառն հինգ վեց հազար
 կու լինի. զէրա Հոռոմայ հաւան զէչ է: Եւ
 թէ խարճն հարցնէք, նա շաբաթն տասն հա- 110
 զար զուռուչ կ'երթայ, զի երեք հարիւր կամ
 աւելի սպասաւորք ունի. ամէնն կարմիր
 զգեստով են, զատ վէքիլնուն, հագիմնուն,
 քէհեանուն եւ քահանայիցն. քանզի քաղքի
 նման է. ունի դատաւոր, եազըճիք, ճա- 115
 ոահնի, մաճունճիք, տէլլաքնի, աչչիք, սօ-
 մունճիք, թող զփայտն եւ զայլ հիւանդի կե-
 րակուրս, զտօչկնին, չալչաֆնին եւ այլ ամե-
 նայն պէտքն: Եւ զի աշխարհն այն սղութիւն
 է, օխա մի միս ժե դրամ, չ դրամ հացն 120
 մէկ ստակ: Զի աշխարհն այն մարդաշատ է.

99 յօրինաց: — 102 հիւանդ հոս եւ վարը միշտ
 գրուած հիւանա: — 105 յանկողնի: — 116 սօմունճիք: